ԿԱՐԾԻՔ

ԱՆԻ ՀՐԱՉՅԱՅԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ

«ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ ԵՎ ՈՒՆԵԶՐԿՈՒՄԸ 1909-1918 ԹԹ.» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անի Ոսկանյանի թեկնածուական ատենախոսությունը փորձ է լուսաբանելու չափազանց արդիական ու կենսական մի հիմնահարց՝ Հայոց ցեղասպանության գործընթացն Ադանայի նահանգում: Պատմագիտության, միջազգային իրավունքի և ցեղասպանագիտության տեսանկյունից խիստ կարևոր է խորքային և բազմակողմանի ուսումնասիրության ենթարկել հայության նկատմամբ իրականացված ցեղասպանության փուլերը, պատճառները, ընթացքը և հետևանքները: Կիլիկիայում իրականացված ցեղասպանական գործողությունները Օսմանյան կայսրության ամբողջ հայ ազգաբնակչության դեմ ուղղված մեկ ընդհանուր հանցագործության մասն էին: Ադանայի նահանգի ջարդերով երիտթուրքերը ձեռք բերեցին ցեղասպանություն գործադրելու առաջին լուրջ փորձը, Կիլիկիայով սկսվեցին Մեծ եղեռնի հանցագործությունները:

Չնայած թեման հետազոտության նյութ է դարձել տարբեր ուսումնասիրողների կողմից, սակայն բազմաթիվ հարցերի պատասխաններ դեռևս տրված չեն: Այս առումով դեռևս կան չբացահայտված փաստեր ու երևույթներ, հետևաբար բավական աշխատանք կա իրականացնելու: Կարևոր է նաև ունեզրկման շարունակական գործընթացի և դրա հետևանքների բացահայտումն ու լուսաբանումը: Այս խնդիրը ևս չափազանց կարևոր և դժվարին աշխատանք է պահանջում պատմաբաններից և իրավաբաններից:

Խնդրի արդիականությունը և կարևորությունը պահանջում է հիմնահարցի բազմակողմանի քննություն, վերլուծություն և ճշգրտված փաստերի ու տեսակետների հանրայնացում: Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել գիտության, կրթության, դիվանագիտության և այլ բնագավառներում:

Հետազոտությունն իրականացվել է փաստաթղթերի, հուշագրությունների, մամուլի և գիտական գրականության քննական վերլուծության հենքի վրա՝ պատմանկարագրողական, պատմահամեմատական, համադրական, պատմաքննական մեթոդների կիրառմամբ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Աշխատության ծավալը կազմում է 192 էջ:

Ներածության մեջ հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ժամանակագրական սահմանները, գիտական նորույթը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը:

Առաջին գլխում՝ «Ադանայի նահանգի հայության ժողովրդագրական, տնտեսական վիճակը և 1909 թ. կոտորածների հետևանքները», ատենախոսը ներկայացրել է Ադանայի նահանգի ժողովրդագրական և տնտեսական իրավիճակը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, 1909 թ. կոտորածները և ունեզրկումը:

Երկրորդ գլխում՝ «Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման փորձերը և օսմանյան իշխանությունների հողազրկման քաղաքականությունը», ատենախոսը քննել է 1910-1914 թթ. կիլիկիահայերի փորձերը վերականգնելու տնտեսությունը և դրան զուգահեռ երիտթուրքերի հողազրկման քաղաքականությունը:

Երրորդ գլխում՝ «Ադանայի նահանգի հայության դրությունն Առաջին աշխարհամարտի տարիներին և զինադադարի առաջին ամիսներին», հեղինակը լուսաբանել է Ադանայի հայության տեղահանության, բնաջնջման և ունեզրկման գործընթացը պատերազմի տարիներին, ինչպես նաև Մուդրոսի զինադադարից հետո կիլիկիահայության մնացորդների հայրենադարձման և բռնագրավյալ գույքերի խնդիրը:

Եզրակացություններ բաժնում հեղինակը ներկայացրել է հիմնահարցի հետ կապված իր եզրահանգումները:

Ատենախոսը գիտական շրջանառության մեջ է դրել մեծ քանակությամբ արխիվային փաստաթղթեր, հուշագրություններ, որոնք վերաբերում են քննարկվող թեմային: Ատենախոսության համար հիմնային են հանդիսացել Մեսրոպ Մաշտոցի

անվան Մատենադարանի, Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվային նյութերը: Օգտագործվել են նաև բազմաթիվ հուշագրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, գիտական հետազոտություններ և մամուլը: Արխիվային նյութերից շատերն առաջին անգամ են գիտական շրջանառության մեջ դրվում, որը աշխատանքի դրական կողմերից է:

Աշխատանքը կատարված է բավական գրագետ, հեղինակը ցուցաբերել է գիտական աշխատանք կատարելու հմտություններ: Ատենախոսությունը պարունակում է որոշակի գիտական նորույթ, քանի որ նոր փաստեր են շրջանառության մեջ դրվել և փորձ է արվել նոր տեսանկյունից ներկայացնելու հիմնահարցը:

Սակայն ունենք որոշ դիտարկումներ Անի Ոսկանյանի թեկնածուական ատենախոսության մեջ թույլ տրված բացթողումների ու թերացումների վերաբերյալ:

- Հեղինակը զգալի տեղ է հատկացրել Մատենադարանի, Երուսաղեմի և Հարվարդի արխիվներից քաղված նյութերին, որը միանշանակ չափազանց դրական է, սակայն անուշադրության է մատնել Հայաստանի ազգային արխիվում և Փարիզի Նուբարյան մատենադարանում առկա հսկայական նյութը, որն անմիջականորեն վերաբերում է ուսումնասիրվող հիմնահարցին:
- Հեղինակը օգտվել է Ադանայում հրատարակված «Կիլիկիա» պարբերականի միայն 1919 թ. համարից, սակայն Կիլիկիայում 1919-1921 թթ. հրատարակված մյուս պարբերականները (Արարա, Ազատ Տաւրոս, Հայ ձայն, Տաւրոս, Կիլիկեան սուրհանդակ, Նոր սերունդ, Նոր աշխարհ, Քաղաքացի) անուշադրության են մատնվել:
- Հեղինակը ծանոթ չէ հիմնահարցին անմիջականորեն առնչվող մեր 28 հոդվածներից և 5 գրքերից ոչ մեկին: Դրանցում լուսաբանված են Կիլիկիայի բնակչության թվաքանակին ու տեղաբաշխմանը, տեղահանությանը, կոտորածները կանխելու հնարավորությանը, պատերազմից հետո հայկական լեգեոնի և բրիտանական զորքերի միջոցով ազատագրմանը, պատերազմի տարիներին Կիլիկիայում մնացած հայերին,

հայրենադարձությանը, ինքնապաշտպանություններին, ֆրանսիական վարչակարգի և հայերի դեմ կազմակերպված թուրքական խռովություններին: Թեմային առնչվող նորագույն հետազոտություններին ծանոթ չլինելու արդյունքում բավական լուրջ թերացումներ ու սխալներ կան աշխատանքի բոլոր գլուխներում:

- Խորհուրդ ենք տալիս ծանոթանալ Մայք Սայքսի աշխատություններին, ով 3 անգամ ճամբորդել է Արևմտյան Հայաստանում, 2 անգամ՝ Կիլիկիայում: Նա 1913 թ. Ադանայի նահանգում է եղել, ներկայացրել է Կիլիկիայի սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակը, կանխատեսել է սպասվող ջարդերը:
- Թեմայի վերնագրի ժամանակագրական շրջանակը սխալ է ընտրված, որի արդյունքում նյութը և շարադրանքը չեն կարող ամբողջական լինել: Հեղինակը ինքը նույնպես գիտակցել և ընդունել է այդ: Նա փորձել է «Ուսումնասիրության ժամանակագրական սահմանները» բաժնում հիմնավորել, թե ինչու է 19-րդ դարի վերջից սկսել և աշխատանքը հասցրել մինչև 1920-ական թթ. վերջ (Տե՛ս էջ 4): Սակայն պետք է նշել, որ 1918 թվականից հետո իրադարձությունների զարգացումը չափազանց թերի է ներկայացվել և հասցվել է մինչև 1949 թ.: Պետք է վերնագրում արտացոլվեր ժամանակագրական ավելի լայն շրջանակ, գուցե մինչև Կիլիկիայի վերջնական հայաթափումը 1921 թ. վերջին, իսկ հետպատերազմյան գործընթացներին ավելի լուրջ ուշադրություն դարձվեր:
- Ատենախոսությունը հիմնականում շարադրված է նկարագրական մեթոդով, սեփական տեսակետները, մեկնաբանությունները, վերլուծությունները բավական քիչ են:
- Բավական ընդարձակ սկզբնաղբյուրային հենքի վրա է շարադրված աշխատանքը, սակայն նյութը դեռևս չի մարսվել հեղինակի կողմից:
- Էջ 4 – նշված է «Սուլթան Աբդուլ Ազիզ I»: Եթե չկա երկրորդը, ապա առաջին չեն գրում, իսկ սուլթանը մեծատառով չի գրվում:

- էջ 4 – «Կայսրությունում տեղի ունեցող փոփոխությունները 1876 թ. հանգեցնում են նաև Օսմանյան կայսրության առաջին սահմանադրության ընդունմանը, որի լիազորություններն ավարտվում են ընդունումից անմիջապես հետո՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ի գահակալությամբ»: Հեղինակը պետք է իմանար, որ Աբդուլ Համիդը գահակալել է 1876 թ. օգոստոսի 31-ին և նրա օրոք է 1876 թ. դեկտեմբերին ընդունվել սահմանադրությունը:
- էջ 19-20 – Կիլիկիայի հայության թվաքանակի վերաբերյալ բերում է տարբեր ուսումնասիրողների տվյալներ, որոնք բացատրության կարիք ունեն: Նախ ներկայացնում է 1845 թ. օսմանյան մարդահամարի տվյալները, ըստ որի՝ Կիլիկիայում բնակվում էր 270.000 հայ, ապա՝ 1882 թ. պատրիարքարանի տվյալները, որոնք Ադանայի նահանգում հաշվում են 280.000 հայեր: Իսկ 1914 թ. հեղինակը բերում է ազգությամբ հայ 3 գիտնականների տվյալներ, որոնցով հայության թիվը Ադանայի նահանգում տատանվում էր 98.000-132.000-ի սահմաններում: Հարց է առաջանում, թե ինչու և ինչպես մի քանի տասնամյակում նվազեց հայերի թվաքանակը 90.000-150.000-ով և ոչ թե ավելացավ: Արդյո՞ք դրանով չենք ընկել թուրքական կեղծարարության ծուղակը:
- էջ 34 – Տարսոնը ներկայացնելուց անմիջապես հետո անցնում է Սսի բնակչությանը և տնտեսությանը, առանց նշելու Սիս անունը: Տպավորություն է, որ հեղինակը շարունակում է Տարսոնի մասին խոսել, ուղղակի հակասական թվեր է ներկայացնում:
- էջ 73-76 – Ներկայացվում են 1910 թ. համայնքային մարմինների կողմից տարբեր խանութների ու կալվածքների գնման մասին: Ցանկալի է, որ ճշգրտվեր, թե ինչ ֆինանսական աղբյուրների միջոցով են իրականացվել այդ գործարքները:
- Աշխատանքի երկրորդ գլխում հիմնականում տարբեր աղբյուրներից քաղված նյութեր են խանութների, արհեստանոցների, տարբեր

շինությունների կառուցման մասին: Սակայն դրանք ծաղկաքաղ են և ընդհանուր պատկեր չեն տալիս:

- էջ 90-91 – Ատենախոսը երկու անգամ ներկայացնում է հրկիզված 4 եկեղեցիների և 7 վարժարանների հարցը, մեկ անգամ՝ հրկիզված 11 եկեղեցիների և 15 դպրոցների: Ընթերցողի համար անհասկանալի է, թե Ադանայի նահանգում քանի եկեղեցի և դպրոց է հրկիզվել:
- էջ 91-93 – Ներկայացված են 1914 թ. դեկտեմբերին կառավարության պահանջով հայկական եկեղեցիների ցուցակները ներկայացնելու խնդիրը և Կիլիկիայի որոշ եկեղեցիների հաշվեցուցակները: Դրանք ցանկալի էր գրել ցեղասպանության ընթացքում ունեզրկման քաղաքականության համատեքստում: Այս հատվածում այն կտրված է մնացյալ նյութից:
- էջ 94-95 – Հակասություն կա 94 էջի վերջին պարբերության և 95 էջի երկրորդ պարբերության միջև: Նախ նշվում է, որ 19-րդ դարի վերջից մինչև Առաջին աշխարհամարտը «խիստ վերահսկվում, սակայն առանձնապես չէր խոչընդոտվում նրանց [հայերի – Ս.Պ.] գործունեությունը մշակութային, կրթական և տնտեսական բնագավառներում», ապա ներկայացնում է, թե ինչպես էին նույն շրջանում հողազրկում և ունեզրկում հայերին:
- էջ 123 – Նշվում է, որ Կիլիկիան է Եղեռնի առաջին հարվածի տակ ընկել, որը ճիշտ է, սակայն չի մեկնաբանվում, թե ինչ ռազմագիտական ու տնտեսական նկատառումներով էր դա պայմանավորված: Օրինակ՝ անգլո-ֆրանսիական դեսանտային զորքերի ափհանման նախագծերը և դրա հետ կապված երիտթուրքերի վախերը:
- 3.1 ենթագլխում՝ «Ադանայի նահանգի հայերի բնաջնջումը և ունեզրկումն Առաջին աշխարհամարտի տարիներին», ցանկալի կլիներ հնարավորինս որոշակիացնել, թե Եղեռնի տարիներին մոտավորապես ինչքան հայ մնաց Ադանայի նահանգում և ինչ հանգամանքներով էր դա պայմանավորված:
- էջ 151 – Հեղինակը համոզված է, որ զինադադարի առաջին ամիսներին «Անտանտի տերությունների զինվորներ Ադանա քաղաքում գրեթե չկային»:

Դա իրականությունից հեռու է: Քաղաքում էր ֆրանսիական բանակի Հայկական լեգեոնը, որի ուժերի հսկողության տակ էր նաև Ադանայի ամբողջ նահանգը: Հայկական լեգեոնը կազմավորվել էր Ֆրանսիայի կողմից և գտնվում էր Անտանտի այդ տերության ղեկավարման ներքո:

- 3.2 ենթագլուխը՝ «Աքսորյալ հայերի վերադարձը հետպատերազմյան Ադանայի նահանգ և բռնագրավյալ գույքերի խնդիրը», բավական թույլ է: Այն ամբողջական պատկերացում չի տալիս ենթագլխի խնդիրների մասին, ժամանակագրական շրջանակը դուրս է գալիս ատենախոսության թեմայի շրջանակից:
- Երրորդ գլխի վերաբերյալ հեղինակի գիտելիքները և պատկերացումները կարող էին էականորեն փոխվել, եթե ուսումնասիրեր Կիլիկիայի մամուլը, Հայաստանի ազգային արխիվի և Նուբարյան մատենադարանի նյութերը, ինչպես նաև տվյալ բնագավառին վերաբերող գիտական հետազոտությունները:
- Եզրակացությունները աշխատանքի համառոտ շարադրանքն են, որտեղ չի հանդիպում հեղինակային որևէ նորույթ:

Մեր կողմից մատնանշված բացթողումների կողքին պետք է նշել, որ ատենախոսի կողմից կատարվել է հսկայական աշխատանքը, շրջանառության մեջ են դրվել բավական թվով ախիվային փաստաթղթեր և նոր նյութեր: Թեմայի ուսումնասիրությունը չափազանց մեծ կարևորություն ունի պատմագիտության և ցեղասպանագիտության համար: Հույս ունենք, որ հետագայում՝ աշխատության հրատարակման ժամանակ, մատնանշված թերացումներն ու բացթողումները հաշվի կառնվեն և ավելի գիտական, ամբողջական և արժեքավոր ուսումնասիրություն կդրվի ընթերցողների սեղանին:

Անի Հրաչյայի Ոսկանյանի «Ադանայի նահանգի հայ բնակչության բնաջնջումը և ունեզրկումը 1909-1918 թթ.» ուսումնասիրությունը պարունակում է որոշակի գիտական նորույթ և հիմնականում համապատասխանում է թեկնածուական ատենախոսության համար պահանջվող չափանիշներին: Աշխատանքի գիտական դրույթներն ու

եզրակացությունները հիմնված են փաստարկված նյութի վրա: Շրջանառության մեջ են դրվել արխիվների նոր փաստաթղթեր: Ուստի, միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդին՝ Անի Հրաչյայի Ոսկանյանին շնորհելու նրա հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ս. Պողոսյան

Ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՄՀ գիտական քարտուղար,
ուսումնամեթոդական գծով պրոռեկտոր՝ մ.գ.թ., դոցենտ Մ. Իսպիրյան

13.09.2024